# Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի օրակարգ

Հիմք ընդունելով «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Հիմնադրամ) կանոնադրության 38-րդ կետը՝ 2019 թվականի հոկտեմբերի 9-ին, ժամը 14:30-ին անցկացվելու է Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստ, որը տեղի կունենա ՀՀ պաշտպանության նախարարության շենքում հետևյալ օրակարգով.

1. Հոգաբարձուների խորհրդի 09.10.2019թ.-ի նիստի օրակարգի հաստատում,
2. Հիմնադրամի գործունեության (կատարված աշխատանքների) վերաբերյալ տնօրենի հաշվետվություն,
3. «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017 թվականի հոկտեմբերի 3-ի «Նույն զինծառայողի կապակցությամբ հատուցման դեպքի փոփոխության պարագայում վճարման ենթակա հատուցման գումարի վերահաշվարկման կարգը հաստատելու վերաբերյալ» թիվ 15 որոշմամբ հաստատված կարգում փոփոխություն կատարելու վերաբերյալ որոշում,
4. «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017 թվականի մարտի 2-ի թիվ 9 որոշմամբ հաստատված «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հատուցման գումարների վճարման կարգը հաստատելու վերաբերյալ» որոշմամբ հաստատված՝ կարգում փոփոխություն կատարելու վերաբերյալ որոշում,
5. «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017 թվականի մարտի 2-ի «Հիմնադրամի կողմից եռամսյակային հաշվետվությունների հրապարակման կարգը, ձևը սահմանելու վերաբերյալ» թիվ 10 որոշմամբ հաստատված կարգում փոփոխություն կատարելու վերաբերյալ որոշում,
6. Այլ հարցեր: